ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ-

(Կրթադաստիարակչական ժամանակակից խնդիրներ պատմության դասընթացների համատեքստում)

ԴՊՐՈՑ «Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց »

ԿԱՏԱՐՈՂ՝ Լարիսա Խոջոյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Ալեքսանյան Կարինե

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

ԳԼՈՒԽ I Գիտելիքի ստուգման բնույթն ու մեթոդները պատմության դասին----------6

ԳԼՈՒԽ II : Գիտելիքների ամրապնդումը և ստուգումը պատմության դասին:------10

Եզրակացություն----------21

Օգտագործված գրականության ցանկ----------22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների գիտելիքների ու հմտությունների ստուգումը դասավանդման կարևոր փուլերից և մասերից մեկն է: Գիտելիքների ստուգումից ու արդյունքներից է կախված հետագա դասավանդման կազմակերպումն ու իրականացումը: Համարվում է, որ ստուգումը փոխադարձ կապ է ապահովում աշակերտի և ուսուցչի միջև՝ իր մեջ ներառելով և՛ աշակերտների ստացած գիտելիքի մակարդակի և՛ ուսուցչի աշխատանքի արդյունավետության մասին տվյալներ: Ստուգման միջոցով պարզ է դառնում, թե դասավանդման արդյունքները ինչքանով են համապատասխանում կրթական նպատակներին: Գիտելիքի ստուգմամբ և արդյունքների վերլուծությամբ ուսուցչի համար պարզ է դառնում նաև, թե իր ընտրած ու կիրառած ուսուցման մեթոդները որքանով են արդյունավետ և թե ինչպես պետք է շարունակել մեթոդների ընտրությունն ու կիրառումը: Գիտելիքի ստուգումը իրենից ենթադրում է ոչ միայն չոր թվականների ու փաստերի հարցում ու ստուգում, այլ նաև աշակերտների կարողությունների ու հմտությունների վերլուծություն:

Աշխատանքի նպատակն է՝

- Ներկայացնել գիտելիքի ստուգման մեթոդներն ու միջոցները պատմության դասավանդման ընթացքում

Աշխատանքի խնդիրներն են՝

- Նկարագրել գիտելիքի ստուգման բնույթն ու տեսակները
- Անդրադառնալ գիտելիքի ստուգման միջոցներին
- Նկարագրել մշակութային դասերին կիրառվող գիտելիքի ստուգման մեթոդները

Թեմայի արդիականությունը. Արդիական ու կարևոր է ուսումնասիրել գիտելիքի ստուգման ժամանակակից միջոցներն ու մեթոդները, քանի որ այսօր աշխարհում տեղի ունեցող կրթական ու գիտական փոփոխություններն իրենցից ենթադրում են նոր մոտեցումների կիրառում դասավանդման ընթացքում: Պատմության դասավանդման ընթացքում կիրառվող ավանդական մեթոդները և իրականացվող ավանդական դասերը հետզհետե իրենց տեղը զիջում են նոր մեթոդներին ու նորագույն տեխնոլոգիաներով հագեցած, ինտերակտիվ, բոլոր աշակերտներին ներառող, ուսուցման համընդհանուր ձևավորմամբ իրականացվող դասերին: Պատմության դասավանդման հիմնաքարերից մեկի՝ աշակերտների գիտելիքների ստուգման գործընթացը ևս ենթարկվել է նոր

մեթոդների ու մոտեցումների «ազդեցությանը»: Իր հերթին ժամանակակից մեթոդների կիրառումն ու ժամանակակից մոտեցումներին համապատասխան դասերի անցկացումը հնարավորություն են տալիս դասապրոցեսում ներառել բոլոր աշակերտներին, զարգացնել նրանց կարողություններն ու հմտությունները, դասերը կազմակերպել ու իրականացնել առավել հետաքրքիր:

Գրականության տեսություն. Աշխատանքը ստեղծվել է հետազոտական և վերլուծական գրքերն ու նյութերը ուսումնասիրելու արդյունքում: Աշխատանքը գրելիս կիրառվել են տարբեր աշխատություններ ու հոդվածներ, որոնցում նկարագրվում են գիտելիքի ստուգման բնույթը, տեսակները, միջոցներն ու մեթոդները:

Աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի նպատակն ու խնդիրները, արդիականությունը, գրականության տեսությունը և աշխատանքի կառուցվածքը:

Գլուխ առաջինում Գիտելիքի ստուգման բնույթն ու մեթոդները պատմության դասին. այս գլխում ներկայացված են գիտելիքի ստուգման բնույթն ու տեսակները, ինչպես նաև այն մեթոդները, որոնց միջոցով կարող ենք իրականացնել գիտելիքի ստուգումը՝ պատմության դասաժամի ընթացքում՝ մշակութային թեմաների դասավանդման ժամանակ:

ԳԼՈՒԽ երկրորդում ՝ պատմության դասին գիտելիքների ամրապնդման մասին:

Եզրակացության մեջ ներկայացված են ուսումնասիրության ընթացքում մեր կատարած վերլուծությունները, եզրահանգումներն ու կարծիքները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Պատմության ուսուցումը հնարավոր չէ կազմակերպել և իրականացնել առանց ուսուցման մեթոդների: Ուսուցման մեթոդը ուսուցչի և սովորողի փոխկապակցված համատեղ գործունեության եղանակն է, որն ուղղված է կրթության բովանդակության յուրացմանը: Մեթոդների կիրառման միջոցով ձևավորվում են աշակերտների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Դասավանդման ընթացքում տարբեր միջոցների ու մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս ոչ միայն բարձրացնել առարկայի նկատմամբ հետաքրքրությունը, այլ նաև նպաստում է աշակերտների ինքնուրույն հետազոտական, ստեղծագործական հմտությունների զարգացմանը: Պատմության դասավանդման ընթացքում կիրառվող մեթոդները տարբեր մասնագետների ու մեթոդիստների կողմից խմբավորվում են տարբեր կերպ: Հիմնականում պատմության դասավանդման մեթոդիկայում տարածված են.

- Խոսքային մեթոդները-պատմելը, զրույցը, դասախոսությունը,
- Զննական մեթոդները-նկարների, տեսանյութերի ցուցադրումն ու քննարկումը, քարտեզների հետ աշխատանքը
- Գործնական մեթոդները-վարժությունները, տարբեր առաջադրանքի կատարումը,
- Տրամաբանական մեթոդները-ինդուկտիվ (մակածում), դեդուկտիվ (արտածում),
- Ճանաչողական-ստեղծագործական և հետազոտական մեթոդները-վերարտադրողական, այսինքն՝ բացատրական-ցուցադրական և պրոբլեմային-որոնողական, այսինքն՝ պրոբլեմային շարադրանք, էսսե, էվրիստիկ զրույց, հետազոտական աշխատանք,
- Հետաքրքրությունների խթանման մեթոդները-ճանաչողական խաղեր, հուզական խթանում,
- Ինտերակտիվ-կառուցողական մեթոդները-խաճանկար, ուսումնական բանավեճ, դերային խաղ, աշխատանք սկզբնաղբյուրի հետ և այլն,
- Համագործակցային ուսուցման մեթոդները-թիմային աշխատանք, շրջագայություն պատկերասրահում, խմբային հետազոտություն, մտածիր–զույգ կազմիր – քննարկիր, ձնակույտ, կենտրոններով աշխատանք,

- Քննադատական մտածողության մեթոդները (վերլուծական, գնահատողական էսսեներ, եթե ես լինեի և այլն)
- Ինքնուրույն աշխատանքի մեթոդները-ինքնուրույն աշխատանք դասագրքով, սկզբնաղբյուրներով, ուսումնազննական պիտույքներով, 5 բոպեանոց շարադրանք, աղյուսակի լրացում և այլն։

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները։ Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը։ Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ։ Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար։ Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը։ Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար։ Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի։ Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»։ Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է։ Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում։ Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել։ Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս։ Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին։ Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան։ Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է։ Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել։ Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը։ Բացի այս ամենը՝ մեթոդը արդյունավետ պետք է լինի՝ ըստ իր հետապնդած նպատակի։ Դասի սկզբի ու ավարտի մեթոդներն ունեն իրենց նպատակը՝ հետաքրքրության խթանում և դասի ամփոփում, նոր նյութի բացատրման ժամանակ կիրառվում են համապատասխան մեթոդներ՝ կարճ դասախոսություն, տեսակավորման թերթիկներ, կենտրոններով աշխատանք և այլն։ Իսկ արդեն գործնական ու ինքնուրույն աշխատանքների ժամանակ, երբ ուսուցչի նպատակն է պարզել աշակերտների ստացած գիտելիքները ու զարգացնել

նրա մի շարք հմտությունները, ապա այս դեպքում կիրառվում են համապատասխան մոտեցումներ ու մեթոդներ։

Որպեսզի հասկանանք աշակերտների պատմական գիտելիքների ստուգման ինչպիսի մոտեցումներ ու մեթոդներ կան, նախ պետք է հասկանանք, թե ինչ է իրենից ենթադրում պատմական գիտելիք հասկացությունն ու ինչպիսի կառուցվածք ունի։ Այս հարցում կան տարբեր մոտեցումներ։ Ըստ Ֆ. Կորովկինայի՝ պատմական գիտելիքն իրենից ենթադրում է պատմական փաստերի, ժամանակագրության, իմացություն, բացատրում։ Ըստ Ս. Եժովի՝ այն իրենից ենթադրում է պատմական փաստերի, պատմական ժամանակի, տարածության իմացություն, ներկայացում, գնահատում։

Կրկնություն, ստուգում և գիտելիքների հաշվառում պատմության դասին

Կրկնությունը պատմության դասին կարևորվում է նրանով, որ հնարավորություն է տալիս ամրապնդել աշակերտների հիշողության մեջ հիմնական փաստերը, հասկացությունները, գաղափարները, դրանց փոխկապակցվածությունը, համակարգել աշակերտների գիտելիքները, ձևավորել նախկինում ստացած գիտելիքները որպես իմացության գործիք կիրառելու կարողություն։

Կրկնության հիմնական տեսակները

- նախնական /դասի ժամանակ ամրապնդում/
- ընթացիկ
- արդյունքային /ընդհանրացնող/
- նախաքննական

1. Նախնական /դասի ժամանակ ամրապնդում/։ Նպատակը աշակերտների ուշադրությունը սևերել դասի ժամանակ քննարկված փաստերի, հասկացությունների, տեսական եզրակացությունների վրա։ Կիրառվում են նախնական կրկնության 2 տեսակ. Ուղեկցող. յուրաքանչյուր հարցից հետո ուսուցիչը կազմակերպում է զրույց և աշակերտներին կրկնել է տալիս ունկընդրած նյութի հիմնական դրույթները։ Հետևող. կրկնությունը կազմակերպվում է նոր նյութի ներկայացնելուց ամինջապես հետո զրույցի, տերմինների գրանցման, հասկացությունների սահմանման, իրազննական պիտույքների օգտագործման միջոցով։ Միջին դպրոցում ցանկալի է կիրառել նախնական կրկնության մեթոդը, քանի որ աշակերտները դեռ չեն կարող ինքնուրույն ընդգծել գլխավորը։ Ավագ դպրոցում դա պարտադիր չէ և կարելի է սահմանափակվել ուսուցչի կողմից դասի ամփոփումով։

2. Ընթացիկ կրկնությունը - կրկնության հիմնական ձևն է։ Այն պետք է կիրառվի յուրաքանչյուր դասի ընթացքում։ Նպատակը. գիտելիքների համակարգումն է, փաստերի, հասկացությունների, օրինաչափությունների կապերի ամրապնդումը։ Ընդհանրացնող կրկնության նպատակը որոշակի բաժնի կամ թեմայի վերաբերյալ ստացած գիտելիքների ամփոփումն է։ Այս տեսակ կրկնությունը կատարվում է հատուկ կրկնողական դասերի ժամանակ։ Շատ կարևոր է հիշել, որ ամփոփիչ դասը ոչ այնքան գիտելիքների ստուգում է, այլ առավել բարդ հիմնախնդիրների յուրացման ու պարզաբանման գործընթաց է։ Այն կարող է կազմակերպվել սեմինարի, բանավեճի, խաղերի կազմակերպման միջոցով։
3. Ավարտական դասարաններում կարելի է կազմակերպել նախաքննական Կրկնություն։ Նպատակը պարզ է. աշակերտներին պատմության քննությանը նախապատրաստումն է։ Սակայն ավելի արդյունավետ կրկնություն կազմակերպելու համար ցանկալի է այս դասերը կազմակերպել ոչ թե ուսումնական տարվա ավարտին, այլ պարբերաբար։

Կրկնության և ընդհանրացման դասին պետք է կարևորել հետևյալ կառուցվածքային փուլերը.

1. հենակետային գիտելիքների (փաստերի, երևույթների) արդիականացում և ամրապնդում,
2. կարողությունների և հմտությունների ամրապնդում,
3. նախկինում մաս-մաս ուսումնասիրած պատմական դեպքերի, երևույթների ամբողջական պատկերի ստեղծում,
4. գիտելիքների ընդհանրացում և համակարգում,
5. մարզողական առաջադրանքների և վարժությունների կատարում և այլն։

Գլուխ երկրորդ։ Գիտելիքների ամրապնդումը և ստուգումը պատմության դասին։

Գիտելիքների ամրապնդման մեխանիզմները կիրառվում են և յուրաքանչյուր դասի ընթացքում, և գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամփոփիչ կրկնության և ընդհանրացման դասերերի ընթացքում։ Այդ դասերը կազմակերպվում են հիմնականում կիսամյակների կամ ուստարվա վերջում, որոնց գլխավոր խնդիրն արդեն անցած ամբողջ նյութի, թեմաների ու բաժինների կամ ամբողջությամբ վերցրած ամբողջ դասընթացի նյութի հիման վրա ձեռք բերած գիտելիքների համակարգի ձևավորումն ու ընդհանրացումն է, օրինակ՝ Հայաստանի մշակութային նվաճումները հին շրջանում և միջնադարում։ Գիտելիքների ամրապնդման հաջողության երաշխիքը դասին լավ նախապատրաստվելն է։ Կազմվում է դասի պլան, որի մեջ արտացոլում են գտնում ուսումնական նյութի և դիտողական պիտույքների ընտրությունը, հարցերի և առաջադրանքների (հիմնական և լրացուցիչ) քանակը և ծավալը, ուսուցչի խոսքի և սովորողների պատասխանների հարաբերակցությունը, խաղային տարրեր մտցնելու հնարավորությունը։ Այս պլանը ուսուցիչը հայտնում է սովորողներին դասի անցկացումից մի քանի օր առաջ։ Դասը սկսվում է քննարկումով։ Ընդհանուր համադասարանական զրույցի (ֆրոնտալ հարցում) և սովորողների խմբային և անհատական ծավալուն պատասխանների, պրիզմայի և խմբավորման միջոցով կրկնվում են նրանց հենակետային գիտելիքները։ Քննարկման ընթացքում ուսուցիչն առաջարկում է ոչ միայն կրկնության համար դասագրքում եղած հարցերն ու առաջադրանքները, այլև լրացուցիչ հարցեր, անում համառոտ եզրակացություններ։ Դիտողական պիտույքների հետ տարվող աշխատանքը նպատակ ունի ոչ թե մանրամասնորեն վերլուծել, այլ որպես դիտողական պատկերային հնարներ դրանք օգտագործել իրադարձությունների մեջ ընդհանուրն ու տարբերը պարզաբանելու, եզրակացություններ կատարելու համար։ Հաճախ դասի բովանդակության բանավոր քննարկումը զուգակցվում է գրավոր աշխատանքի կատարման հետ երևույթների համեմատության թեմատիկ աղյուսակի կազմում, գիտելիքների նոր աղբյուրներով սովորողների պատասխանի պլանի կազմում և այլն։ Նշված միջոցներից յուրաքանչյուրը կարելի է կիրառել նաև ընթացիկ դասերի ժամանակ աշակերտներին հաղորդած նոր նյութի ամրապնդման, արդեն ստացած գիտելիքների հետ կապ ստեղծելու, դրանք համակարգելու և ընդհանրացնելու նպատակով։

Գիտելիքի ստուգման արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչից։ Այսինքն, կախված է նրանից, թե ինչպես է ուսուցիչը պլանավորում ու իրականացնում դասը, ինչ միջոցներով ու մեթոդներով է իրականացնում գիտելիքի ստուգումը։ Ստուգման գործընթացի ճիշտ կազմակերպումը հնարավորություն է տալիս ուսուցչին հասկանալու՝ աշակերտների գիտելիքների մակարդակը, նոր թեմաների յուրացման աստիճանը։ Ուսուցիչը պետք է նախապես իմանա, թե ինչ միջոցներով ու մեթոդներով, ինչ ժամանակահատվածում պետք է իրականացնի գիտելիքի ստուգումը։ Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ունենա գիտելիքի ստուգման իր եղանակը, կիրառի արդյունավետ մեթոդները։ Դրանց միջոցով նա կկարողանա ժամանակին համահունչ ձևերով իրականացնել դասն ու աշակերտների գիտելիքների ստուգումը։ Աշակերտներն էլ պետք է իմանան, որ իրենց հմտությունների, կարողությունների, գիտելիքների զարգացումը մշտապես գտնվում է ուսուցչի ուշադրության կենտրոնում, որ իրենց աշխատանքները ու պատասխանները մշտապես ուսուցչի կողմից արժանանում են հետադարձ կապի

Գիտելիքի ամենօրյա ստուգումից զատ իրականացվող ստուգումները՝ թեմայի ամփոփումների, կիսամյակների ավարտի ժամանակ, բնականաբար, ենթադրում է, թե ինչ դաս է լինելու հաջորդ դասը։ Եթե թեմատիկ պլանավորումը տալիս է այդ հնարավորությունը, ապա կարելի է մեկ ամբողջական դաս կազմակերպել՝ ուղղված վերլուծությանն ու սխալների քննարկմանը։ Իսկ եթե չկա այդ հնարավորությունը, ապա կարելի է հաջորդող դասի սկզբնական հատվածում իրականացնել այդ վերլուծությունը։

Գիտելիքների ստուգումը, հաշվառումը հետապնդում է հետևյալ նպատակները.

- Աշակերտների ստացած գիտելիքների յուրացման մակարդակի, հմտությունների ու կարողությունների չափում
- Կոնկրետ փուլում աշակերտների ստացած գիտելիքների ստուգում
- Ուսուցչի աշխատանքի արդյունավետության չափում, որը հնարավորություն է տալիս բացահայտել թերությունները ու բարելավել աշխատանքը։ Եթե ուսուցիչը ժամանակ առ ժամանակ կարողանում է տարբեր մեթոդներով աշակերտների գիտելիքները չափել, ապա միևնույն ժամանակ կարողանում է իր աշխատանքի արդյունաբերությունը հասկանալ և բարձրացնել ուսուցման արդյունավետությունը։

Գիտելիքի ստուգման տեսակները՝

- Հիմնական ստուգում-կիրառվում է ամեն դասի ընթացքում
- Միջանկյալ ստուգում-իրականացվում է կիսամյակների ընթացքում, թեմաների ամփոփման ժամանակ

- Ամփոփիչ ստուգում-իրականացվում է կիսամյակի վերջում կամ ուսումնական տարվա վերջում՝ պարզելու աշակերտների՝ տվյալ ուսումնական տարում ստացած ընդհանուր գիտելիքները։

Գիտելիքների ստուգման կազմակերպումը ենթադրում է՝ ստուգման ընթացքում աշակերտների իմացական/ուսումնական գործունեության կազմակերպում։ Կարող են կիրառվել գիտելիքի ստուգման հետևյալ մոտեցումները՝

Հարցում՝

- Գիտելիքների ստուգման նպատակով կազմակերպվում է հարցում, որը հետապնդում է գիտելիքների ստուգում, ճշգրտում, համակարգում ու բացթողումների հայտնաբերում։ Հարցադրումները պետք է նախապես պատրաստել, ելնելով դասի նպատակից ու բովանդակությունից։ Հարցման ժամանակ խիստ կարևոր է ամբողջ դասարանի ակտիվության ապահովումը, որպեսզի մեկի պատասխանը բոլորը լսեն և մասնակցեն գործընթացին։ Հարցերը հնարավորություն են տալիս պարզել, թե ինչ չափով են աշակերտները յուրացրել թեման։
- Հարցերը կարելի է և ուղղել ամբողջ դասարանին, և առանձին աշակերտի, և կազմակերպել խմբային աշխատանք և հարցն ուղղել խմբին։ Խմբային հարցում կազմակերպվում է երբ աշակերտները կարող են խմբով պատրաստել հանձնարարությունը։ Գնահատվում են խմբի բոլոր անդամները։
- Հատուկ հնարքների միջոցով պարտադրել աշակերտներին հետևել դասընկերների պատասխաններին և վերլուծել դրանք /շխթայաձև պատասխաններ և գրախոսություններ, լրացումներ/։
- Պատասխանի ժամանակ չպետք է աշակերտին չընդմիջել։
- Ֆրոնտալ հարցումը կազմակերպվում է երբ կարճ ժամանակում պետք է հնարավորինս շատ աշակերտների գնաատել։ Այս հարցումը իրականցնում է ախտորոշման գործառույթ։ Հարցը տրվում է ամբողջ դասարանին, պատասխանում են հերթով ու տեղերից։ Հարցման այս ձևը սահմանափակում է բանավոր խոսքի զարգացման հնարավորությունները։
- Կարելի է կիրառել գրավոր հարցում, որը կնպաստի աշակերտների գրավոր արտահայտմանհմտության զարգացմանը։ Գրավոր հանձնարարությունը ցանկալի է տալ տարբերակներով։ Այն չպետք է շատ ժամանակ պահանջի /15-20 րոպե/։

Թեստ- անգլերեն նշանակում է փորձարկում կամ ստուգում, որը նախատեսված է չափորոշիչների համապատասխան սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների չափման և արդյունքները մեկ կամ մի քանի հատուկ նպատակներով օգտագործելու համար: Սովորողների առաջադիմության ստուգման համար տրվում են թեստեր կիսամյակի վերջում, ուսումնական տարվա ավարտին կամ յուրաքանչյուր թեմայի ուսուցման վերջում՝ ստուգելու համար նյութի յուրացման մակարդակը և աստիճանը: Այդ թեստերը լինում են կիսամյակային ամփոփիչ, տարեվերջյան ամփոփիչ և ուսուցանվող/ձևավորող/ թեստեր: Նաև թեստեր կարող են տրվել ամեն դասի ընթացքում՝ ինքնուրույն աշխատանքի հատվածում, երբ օրինակ 3 հարցանոց փոքրիկ թեստով ուսուցիչը կկարողանա պարզել աշակերտների գիտելիքները տվյալ դասի վերաբերյալ: Թեստերը կազմելիս ուսուցիչը պետք է իմանա թե ինչ նպատակ է հետապնդում, ինչ թեմաներ և ենթաթեմաներ է ընտրում, որն է թեստի բովանդակությունը, այն պետք է բխի պատմության դասավանդման չափորոշիչից, ծրագրից ու ժամաքանակից: Թեստային աշխատանքի կատարման տևողությունը կարող է լինել օրինակ՝ 20 րոպե, 45 րոպե կամ 90 րոպե և այլն: Թեստերը կարող են լինել տարբեր բարդության՝ ունենալով հեշտ, միջին և մեծ բարդության հարցեր ու առաջադրանքներ: Թեստերի բարդության աստիճանը որոշում է ուսուցիչը ՝ ելնելով աշակերտների գիտելիքներից, կարողություններից ու հմտություններից: Այն կարելի է տալ 2-3 տարբերակներով թույլ աշակերտներին ավելի պարզ ու հեշտ թեստեր, իսկ ուժեղ սովորողներին մեծ բարդության և այլ տիպի թեստեր: Կարևոր է կիրառել հայտորոշիչ թեսթ ստուգելու համար, թե ինչպես է յուրացրել այս կամ այն դասը աշակերտը, հետագայում ուսուցման գործընթացը բարելավելու նպատակով: Հայտորոշիչ թեստը կիրառվում է կիսամյակի սկզբում: Սրա բնական շարունակությունն է ամփոփիչ թեստը / կիսամյակային ամփոփիչ աշխատանքից զատ/, որի միջոցով ուսուցիչը ոչ միայն կստուգի աշակերտների գիտելիքները կիսամյակի ավարտին, կհամեմատի դրանք հայտորոշիչ թեստի արդյունքների հետ, այլ նաև կկարողանա վերլուծել իր կատարած աշխատանքը:

Վիկտորինաներ – վիկտորինաների կազմակերպումն այսօր կարող ենք իրականացնել ոչ միայն ավանդական տարբերակով, այլ նաև շատ օնլայն գործիքների միջոցով, օրինակ՝ որևէ թեմայի վերաբերյալ կազմակերպել Kahoot! օնլայն վիկտորինան:

Աշակերտների գիտելիքները պարզելու հետաքրքիր տարբերակ է այն, երբ ուսուցիչը դասարանին կամ աշակերտների որոշակի խմբի հանձնարարի կազմել *ցուցապաստառներ* /պլակատ/ պատմության որևէ թեմայի վերաբերյալ: օրինակ

«Քաղաքամայր ԱՆԻ», կամ «10-14-րդ դդ.-ի հայկական եկեղեցիները» և այլն: Դա նպաստում է աշակերտների համագործակցային աշխատանքին, տալիս սովորողներին ինքնուրույն մտածելու, գիտելիքները խորացնելու հնարավորություն:

Անհրաժեշտ է նաև աշակերտներին հանձնարարել գրել *ռեֆերատներ* և *սահիկաշարեր* պատմության թեմաներով՝ օգտագործելով և գրքերը և նաև համակարգիչը: Դա տալիս է աշակերտներին ինքնուրույն աշխատելու, վերլուծելու, դասագրքից դուրս ավելի լայն գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու հնարավորություն:

Աշակերտների գիտելիքները պարզելու, ստուգելու մեթոդներ՝

- Պատմական թելադրություն. սա կարող է լինել մի քանի ուղղորդող հարցեր, որոնց պետք է աշակերտը պատասխանի: Քանի որ թելադրությունը չի կարող շատ երկար տևել՝ հարցերը պետք է լինեն հստակ ձևակերպված և կոնկրետ պատասխան ակնկալող: Պատմական նմանատիպ թելադրությամբ կարելի է ստուգել աշակերտների գիտելիքների կոնկրետ շրջանակ՝ թվականների, անունների, հասկացությունների մասին :
- Ֆրայերի մոդելը. Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրել օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:
- Գիտելիքի դոմինո. Սովորողները նստում են մեծ սեղանի շուրջ: Քայլ 1. Բոլոր սովորողները ստանում են առնվազն 1 քարտ՝ կախված թեման ամփոփող հարցերի քանակից և սովորողների թվից: Քայլ 2. Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր մոտի քարտը, վրայի հարցը կարդալով, դնում է սեղանին: Քայլ 3. Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և իր քարտը դնում սեղանին՝ նախորդ քարտի հարցի շարունակությամբ, ու կարդում իր քարտի հարցը: Քայլ 4. Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր քարտերը: Քայլ 5. Ավարտին շրջվում են բոլոր քարտերը, և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թեմայի կարևոր հասկացությունը կամ միտքը: Օրինակ՝

արդար աշխատանքն արժանի է արդար վարձատրության: Քայլ 6. Աաշակերտը արտահայտում է վերջնական մտքի վերաբերյալ սեփական մոտեցումները:

- Մտքերի հոսք. Նոր նյութը բացատրելուց հետո ուսուցիչը դադար է վերցնում և աշակերտներին առաջարկում գրել, թե ինչ հասկացան նոր նյութից: Այնուհետև ուսուցիչը կարող է շարունակել նյութը բացատրել կամ կարող է առաջարկել զույգերով աշխատել:
- Պատմությունը թանգարանային ցուցադրությամբ. այս մեթոդը հրաշալի միջոց է պատմական թանգարանային ցուցադրություն նախագծելու, մշակութային արժեքները վերլուծելու ու գնահատելու, աշակերտների հետազոտական հմտությունների զարգացման համար: Հավաքածուն կարելի է ցուցադրել և էլեկտրոնային տարբերակով, և հանրային վայրում, օրինակ՝ դպրոցում: Օրինակ՝ հին հայկական մշակույթի ուսումնասիրման ժամանակ լուսանկարների, տեսանյութերի, տեքստերի միջոցով աշակերտները պետք է իրականացնեն ցուցադրությունը: Նրանք պետք է լուսանկարները ցուցադրեն ըստ հաջորդականության, ներկայացնեն դրա բացատրական տեքստը:
- Պատմական հուշարձանի նախագծում.սա հրաշալի միջոց է աշակերտների մեկնաբանողական և ստեղծագործական հմտությունները զարգացնելու համար: Մշակութային որևէ թեմա ուսումնասիրելիս կարելի է այս մեթոդը կիրառել՝ թեման կապելով պատմական համապատասխան իրադարձության հետ: Կարևոր է, որ սովորողը մեկնաբանի, թե պատմական ինչ բովանդակություն ու ուղերձներ է պարունակում հուշահամալիրի հետ կապված նրա յուրաքանչյուր որոշումն ու մտահղացումը: Ուսուցչի ուղղորդմամբ սովորողներն ընտրում են պատմական որևէ ժամանակաշրջան, որին պետք է անդրադառնա հուշարձանը: Ուսուցչի հետ միասին սովորողները կարող են ուսումնասիրել հուշարձանների տեսակները: Աշակերտները փոքր խմբերով կարող են սկսել նախագծել այն, ուսուցիչը ուղղորդել՝ համապատասխան հարցերով, օրինակ՝ «Հուշարձանը որևէ դե՞պք է պատկերելու, թե՞ դրա հետևանք; Ի՞նչ զգացմունքներ կարթնացնի մարդկանց մոտ; Այն քանդա՞կ է լինելու, որմնանկա՞ր, այգի՞, թե՞ թանգարան» և այլն: Մեկ այլ տարբերակ է գործող հուշարձաի վերաստեղծումը նոր տեսանկյունից, երբ աշակերտները քննարկում ու նախագծում են որևէ հուշարձան, որի իրական օրինակն այսօր կա, օրինակ՝ Հայոց Ցեղասպանությանը նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի մեկ այլ օրինակ՝ ըստ աշակերտի

պատկերացումների։ Այս մեթոդը առավել զարգացնելու դեպքում, ուսուցչի ուղղորդմամբ, սովորողները կարող են ստեղծել թեմատիկ զբոսայգի՝ բաղկացած իրենց նախագծած հուշարձաններից, ցուցասրահներից /օրինակ՝ Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի աշխատանքները, Կիլիկյան Հայաստանի գորգերը/։

- Մետաիմացության թերթիկ. Այս թերթիկը լրացնելիս կատարեք հետևյալ չորս քայլերը՝

  1. Ընթերցե՛ք հարցերը։ Դրե՛ք աստղանիշ բոլոր այն հարցերի դիմաց, որոնց պատասխանները գիտեք։ Դրե՛ք «՞» նշանը բոլոր այն հարցերի վրա, որոնց պատասխանները չգիտեք։ 2. Գրե՛ք իմացած բոլոր հարցերի պատասխանները պատասխան սյունակում։ 3. Մեկ անգամ ևս ընթերցեք այն հարցերի պատասխանները, որոնց վրա դրել եք «՞» նշանը։ 4. Ստուգե՛ք՝ արդյոք ճիշտ եք պատասխանել այն հարցերին, որոնց դիմաց աստղանիշ էիք դրել։

- Ինձնից առաջ հարցրու երեք հոգու. Այս հնարի իմաստն այն է, որ աշակերտները սովորեն նաև միմյանցից։ Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին հարցերով դիմել իրենց դասընկերներին և իրեն դիմել միայն այն բանից հետո, երբ երեք աշակերտների դիմելուց հետո չեն ստացել հարցի պատասխանը։

- Դասի զեկուցող. Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում։ Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի զեկուցող։ Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ կարևոր բաներ սովորեցին։

- Լուսակիր. Ժամանակի սղության պատճառով շատ հաճախ ուսուցիչները դասապրոցեսում իրենց տված հարցերին մեկ-երկու աշակերտից պատասխան ստանալուց հետո առաջ են անցնում։ Այս մոտեցումն ուսուցչին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու, թե ինչ չափով են տվյալ թեման յուրացրել դասարանի բոլոր աշակերտները։ Նման իրավիճակում օգտակար է լուսակիր հնարի կիրառումը։ Թեման ավարտելուց հետո ուսուցիչը դասարանին հարցնում է թեմայի յուրացման մասին։ Յուրաքանչյուր աշակերտ բարձրացնում է իր մոտ գտնվող կանաչ, դեղին, կարմիր թղթերից որևէ մեկը։ Եթե աշակերտը բարձրացնում է կանաչ թերթիկը, նշանակում է ամբողջությամբ յուրացրել է տվյալ թեման։ Եթե բարձրացնում է դեղին թերթիկը, նշանակում է մասնակի է յուրացրել թեման։ Իսկ կարմիր թերթիկ բարձրացնում են այն աշակերտները, ովքեր չեն

յուրացրել թեման։ Եթե կարմիր և դեղին թերթիկներ բարձրացնող աշակերտների թիվը շատ մեծ է, ապա նախընտրելի է, որ ուսուցիչը նորից անդրադառնա թեմային։ Իսկ եթե թիվը մեծ չէ, ապա կանաչ գույն բարձրացրած աշակերտներին կարելի է հանձնարարել աջակցել իրենց դասընկերներին։

- Նկարի վերլուծություն. Միջնադարյան մշակույթի, կրթական համակարգի ուսումնասիրման ժամանակ ուսուցիչը կարող է ցուցադրել միջնադարյան նկարներ, որոնցում պատկերված են կրթական գործիչներ, որևէ կրթական երևույթ և հանձնարարել աշակերտներին բաժանվել խմբերի, քննարկել ու ներկայացնել միջնադարյան դպրոցն ու կրթական համակարգը, միջնադարյան կրթության վրա ազդող քաղաքական, կրոնական գործոնները, դասավանդվող առարկաներն ու «Յոթ ազատ արվեստները»՝ ըստ այդ նկարների։ Մեկ այլ տարբերակ՝ 2-3 բոպե աշակերտներին ցուցադրվում է որևէ նկար՝ կապված դասի թեմայի հետ։ Ուսուցչի հանձնարարությամբ աշակերտները դիտում են այն, ուսումնասիրում մանրամասները, ապա կարող են իրենց եզրակացությունները գրել հետևյալ աղյուսակում՝

Պատմական ժամանակը/ ի՞նչ իրադարձություն է պատկերված, ի՞նչ գիտես դրա մասին	Մարդիկ	Առարկաներ և խորհրդանիշեր	Գործողություններ

- Պատկերի ակնթարթային դիտում. պատմական լուսանկարների, կտավների կամ այլ պատկերապատմումների սոսկ ցուցադրումը աշակերտների համար կարող է ձանձրալի լինել։ Մինչդեռ այդպիսի մշակութային արժեքները ահռելի վերլուծական տեղեկատվություն են պարունակում։ Ցուցադրման փոխարեն կարելի է հետաքրքիր քննարկում կազմակերպել։ Էկրանի միջոցով ցուցադրել նկարը ընդամենը 5 վայրկյանով, ապա անջատել այն և պարզել, թե աշակերտները ինչ են մտապահել, և ըստ աշակերտների՝ ով էր պատկերված, ով կարող է լինել պատկերի հեղինակը, ինչ իրադարձություն էր պատկերված, երբ է ստեղծվել այդ կտավը, որն է դրա ասելիքը։ Օրինակ՝ Հայկական միջնադարյան արվեստի՝ մասնավորապես մանրանկարչության զարգացման մասին խոսելիս կարելի է այս

մեթոդով ցուցադրել Սարգիս Պիծակի 1331 թ.-ին ստեղծված մանրանկարը և վերոնշյալ ուղղորդող հարցերի միջոցով իրականացնել քննարկումը։

- Ֆիլմի վերլուծություն. մինչև ֆիլմը դիտելը, ուսուցիչը կարող է հարցնել, թե աշակերտների մոտ ինչ տպավորություն է թողնում ֆիլմի վերնագիրը, ինչի մասին կարող է լինել այն, ինչ գաղափար է կրում իր մեջ և ինչ կերպարներ կան ֆիլմում։ Ֆիլմը դիտելուց հետո կարող է տեղի ունենալ քննարկում ֆիլմի տեսակի, կերպարների, պատկերվող պատմական իրադարձության, գաղափարի վերաբերյալ։ Ֆիլմերից զատ աշակերտներին կարող են ցուցադրվել տեսանյութեր՝ ոչ միայն քաղաքական պատմության վերաբերյալ, այլ նաև մշակույթի ու մշակութային գործիչների վերաբերյալ։

  Պատմական ֆիլմի պաստառի ստեղծում. սա հրաշալի միջոց է սովորողների մոտ մշակութային արժեքների միջոցով մեկնաբանողական հմտություններ, պատմական ժամանակը հասկանալու հմտություններ զարգացնելու համար։ Ֆիլմերը հաճախ սովորողների համար որևէ նոր բան սովորելու հետաքրքիր ու գրավիչ տարբերակներ են։ Սովորողներն ընտրում են պատմական որևէ ժամանակաշրջան կամ իրադարձություն, առանձնացնում դրանում գործող կերպարներին, որոնք գործելու են նաև ֆիլմի սյուժեում։ Առաջադրանքի արդյունքը ֆիլմի պաստառն է, որտեղ կլինեն այն կերպարները, բաղադրիչները, որոնք կլինեն երևակայական ֆիլմում։ Օրինակ՝ Խորհրդային շրջանի 1970-1980-ական թթ.-ի մշակույթի ուսումնասիրման ժամանակ «Մինասի չարչարանքները. արվեստի մարդը խորհրդային հասարակարգում» օրինակը շատ տեղին կարող է լինել։ Սրա միջոցով սովորողները կարող են դիտարկել, թե ինչպիսի՞ն էր արվեստագետի գործունեությունը խորհրդային հասարակարգում, ինչպիսի՞ մարտահրավերներ կային, ինչպիսի՞ ազդեցություն ուներ խորհրդային հասարակարգը արվեստագետի գործունեության վրա։ Ուսուցչի ուղղորդմամբ պետք է կազմել ուսումնասիրվող դեպքերի ժամանակագրություն, հավաքել տվյալներ, քննարկել ֆիլմի ժանրը, ինչ է պատկերված լինելու պաստառի վրա, ինչ կերպարներ են լինելու։ Կարելի է այս ամենն իրականացնել՝ աշակերտներին բաժանելով 2 խմբի։ Ուղղորդող հարցերով կարելի է օգնել նրանց աշխատանքին, օրինակ՝ «Ի՞նչ դեր ուներ նկարիչների միությունը Մինաս Ավետիսյանի գործունեության համար; Նկարչի գործունեության ո՞ր կողմերն էին հակասել տվյալ ժամանակաշրջանի գաղափարախոսությանը; Ինչու՞ է Մինասը

անդրադարձել միջնադարյան հայ մանրանկարիչների աշխատանքներին; Ինչու՞ է խաչելությունից մեկում պատկերել իր ծնողներին, իսկ խաչվածի դերում՝ իրեն» ։

- Պատմությունն արարողությունների և իրերի միջոցով. տարբեր ժամանակահատվածներում իրականացված արարողությունների համեմատումը կօգնի զարգացնել սովորողների վերլուծական ու համեմատական հմտությունները, պատկերացում կազմել տվյալ ժամանակաշրջանում տարածված մշակութային հարաբերությունների, առօրյա կյանքի մասին։ Ուսուցչի ուղղորդմամբ սովորողները կարող են ուսումնասիրել երկու տարբեր ժամանակաշրջաններում տարածված արարողակարգեր՝ հարսանիքներ, որևէ ազգային տոն և համեմատել դրանք։ Յուրաքանչյուր ժամանակաշրջանի ուսումնասիրման ժամանակ նաև թանգարանների բաց տեսադարաններից տվյալ շրջանի իրերի ցուցադրումը, ուսումնասիրումն ու համեմատումը ևս կօգնի ավելի լավ պատկերացնել պատմական տվյալ ժամանակաշրջանն ու այդ ժամանակաշրջանի մշակույթը։
- Պատմական «հետքերի որոնում». սա հիանալի միջոց է պատմական միջավայրի ու մշակույթի ուսումնասիրումն հետաքրքիր իրականացնելու համար։ Ուսուցչի ուղղորդող հարցերի միջոցով աշակերտները կարող են իրականացնել համապատասխան հետքերի որոնումը։ Օրինակ 1՝ «Գտե՛ք տվյալ կառույցների հելլենիստական ոճի հետքերը» ուղղորդմամբ ու աշակերտներին համապատասխան կառույցների նկարների /ՀՀ ԱԺ շենքի, Հանրապետության հրապարակի շենքերի, Երևանի գրքի պալատի շենքի ցուցադրմամբ կարող է սկսվել ուսումնասիրությունը։ Ապա ուսուցչի ուղղորդմամբ սովորողները կարող են ուսումնասիրել տվյալ կառույցների ստեղծման պատմությունը։ Օրինակ 2՝ Խորհրդային շրջանում մեծ գործարանների, ֆաբրիկաների և այլ կառույցների պատերին տարածված էին հայտնի նկարիչների /օրինակ՝ Մինաս Ավետիսյան և այլք/ որմնանկարները։ Կարելի է սովորողներին առաջարկել գտնել ՀՀ քաղաքների գործարաններում ու այլ կառույցներում առկա Մինաս Ավետիսյանի, Հենրիկ Սիրավյանի, Հակոբ Հակոբյանի և ուրիշների հեղինակած որմնանկարները։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կատարված ուսումնասիրության արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ՝

- Այսօր պատմության դասավանդման մեթոդիկայում տեղի ունեցող փոփոխությունները ենթադրում են ավանդական մեթոդների հետզհետե փոխարինում ժամանակակից մեթոդներով: Առաջանում են տարբեր հնարավորություններ աշակերտների մոտ պատմական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացման համար: Միևնույն ժամանակ աշակերտների գիտելիքների ու հմտությունների ստուգումը ևս կարող ենք իրականացնել նոր մոտեցումներով ու մեթոդներով:
- Գիտելիքի ստուգումը բազում հնարավորություններ է տալիս և՛ ուսուցչի և՛ աշակերտի համար: Ուսուցիչը սրա միջոցով պարզում է, թե իր մոտեցումները, դասի պլանավորումը, ընտրված մեթոդները ինչքանով են եղել արդյունավետ, իսկ աշակերտի համար պարզ է դառնում, թե իրականում ինչ գիտելիքներ ունի, որքան են իր կարողություններն ու հմտությունները զարգացած:
- Գիտելիքի ստուգման տեսակներն են՝ հիմնական ստուգումը, միջանկյալ ստուգումը և ամփոփիչ ստուգումը: Ստուգման ընթացքում կարող են կիրառվել հարցման տեսակները, թեստային առաջադրանքների կատարումը, վիկտորինաների անցկացումը, ռեֆերատների և այլ հետազոտական աշխատանքների, ինչպես նաև տարբեր խմբային ու ինքնուրույն աշխատանքների իրականացումը՝ համապատասխան առաջադրանքներով:
- Մշակութային դասերի ընթացքում գիտելիքի ստուգումն իրենից ենթադրում է ոչ միայն թվականների, մշակութային գործիչների ու նրանց աշխատանքների անվանումների իմացության ստուգում, այլ նաև այն, թե ինչպես է սովորողն ընկալում տրված պատմական ժամանակաշրջանն ու միջավայրը, ինչպես է մեկնաբանում տվյալ մշակութային արժեքն ու գնահատում դրա նշանակությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ուսումնասիրություններ

1. Գիրք պատմության ուսուցման. ինչո՞ւ, ինչպե՞ս, «Պարադիգմա» կրթական հիմնադրամ, Երևան, 2020:
2. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:
3. Ղուկասյան Ա., Հայոց պատմություն 8-9, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013:
4. Виды и методы контроля знаний учащихся при изучении истории и обществознания, https://pandia.ru/text/78/453/34015.php.
5. Глазырина Т., Методика преподавания истории, Новополоцк, 2011.
6. Конспект лекций по курсу “Методика преподавания истории в школе”, https://hist.bsu.by/images/stories/files/uch_materialy/do/hist/4/MPI_Kozik/Konspect.pdf
7. Студеникин М., Методика преподавания истории в школе, Москва, 2000.
8. Формы и приемы проверки знаний на уроке истории, https://multiurok.ru/files/formy-i-priiemy-provierki-znanii-na-urokie-istorii.html.
9. Формы и приемы проверки знаний на уроке, https://solncesvet.ru/opublikovannyie-materialyi/formyi-i-priemyi-proverki-znaniy-na-urok/.

Համացանցային պաշարներ

1. Գլաձորի համալսարան, https://www.youtube.com/watch?v=TUnLTj10XJc:
2. Տաթևի համալսարան, https://www.youtube.com/watch?v=rddbn2eIvdc:
3. Kahoot, https://create.kahoot.it/auth/login.